



ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՐԱՊԴԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՆՆ, ք. Երևան, Զաքյան 7-2
Նեո.՝ (+374 10) 600 701, 600 704
Նեոպատճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

ՏԵՂԵԿԱՆՔ

փաստաբանության խնդիրների վերաբերյալ

10.03.2020թ.

ք. Երևան

1. Փաստաբանների պալատի սնանկ ճանաչվելու հնարավորության հարցը.

«Ք» փաստաբանների պալատը պետք է ունենա անձեռնմխելիություն սնանկության վարույթից, ինչպես օրինակ Կենտրոնական բանկը, որի նկատմամբ չի կարող հարուցվել սնանկության վարույթ: Փաստաբանությունը հանդիսանում է սահմանադրական ինստիտուտ, ուստի՝ պետք է ունենա գործունեության իրավական և կառուցակարգային երաշխիքների բարձր մակարդակ:

Լուծման առաջարկ՝

Խնդիրը կարող է լուծվել օրենսդրական նախաձեռնության կարգով՝ «Սնանկության մասին» օրենքում լրացում կատարելու միջոցով:

2. Ձերբակալված կամ կալանավորված փաստաբանի տեսակցության հարցը.

«Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդվածը փաստաբանների պալատի խնդիր է համարել նաև իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում պաշտպանելը:

Առաջարկը պայմանավորված է Պալատի՝ որպես փաստաբանության սահմանադրական ինստիտուտի և Պալատի նախագահի օրենսդրական կարգավիճակով և դրանից բխող կոնկրետ խնդիրներով: Մասնավորապես, նման իրավունքի տրամադրումը Պալատի նախագահին թույլ կտա անարգել իրագործել իր կարգավիճակից բխող հիմնական պարտականություններից մեկը, այն է՝ փաստաբանի իրավունքների պաշտպանությունը:

Լուծման առաջարկ՝

Խնդիրը կարող է լուծվել օրենսդրական նախաձեռնության կարգով՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացում կատարելու միջոցով, որով Պալատի նախագահին պետք է իրավունք վերապահել անարգել և առանց տեսակցության թվի և տևողության

սահմանափակման՝ տեսակցել ձերբակալված կամ կալանավորված փաստաբանների հետ:

3. Փաստաբաններին վիրավորելու և զրպարտելու հարցը.

Վերջին շրջանում հաճախ են դարձել փաստաբաններին՝ իրենց մասնագիտական գործունեության ընթացքում վիրավորելու և զրպարտելու դեպքերը: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունը արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու համար: Այս տեսանկյունից, գտնում ենք, որ քրեական պատասխանատվություն նախատեսելը պրևենտիվ (կանխիչ) նշանակություն կունենա: Ինչ վերաբերում է փաստաբանին զրպարտելու արարքը քրեականացնելու առաջարկին, ապա, նախ և առաջ, կարևոր է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածը՝ գործող խմբագրությամբ, արդեն իսկ քրեորեն հետապնդելի արարք է որակում դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը:

Լուծման առաջարկ՝

Խնդիրը կարող է լուծվել օրենսդրական նախաձեռնության կարգով՝ ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան լրացում կատարելու միջոցով:

4. Փաստաբանների հարցումները.

Փաստաբանական գործունեություն իրականացնելիս փաստաբանները հաճախ են հանդիպում դժվարությունների, երբ փաստաբանների հարցումներին չեն պատասխանում:

Անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման և այդ նպատակով գործող փաստաբանության ինստիտուտի պատշաճ գործառման համար պետք է հնարավորություն ընձեռել փաստաբանին ստանալ պահանջվող տեղեկությունները:

Փաստաբանական հարցումը, այն է՝ փաստաբանի կողմից իր վստահորդի գործով պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից և մասնավոր կազմակերպություններից տեղեկատվություն պահանջելու իրավունքը փաստաբանի սահմանադրական կարգավիճակի գործնական իրացման անօտարելի տարրերից է, առանց որի արդյունավետ գործառման՝ փաստաբանական գործունեության և, համապատասխանաբար, անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման արդյունավետությունը նկատելիորեն ընկնում է:

Լուծման առաջարկ՝

Խնդիրը կարող է լուծվել օրենսդրական նախաձեռնության կարգով՝ մի շարք օրենքներում, մասնավորապես՝ «Քաղաքացիական կացության ակտերի

մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքներում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու միջոցով:

5. Դատավարական խնդիրներ.

Քաղաքացիական գործերով հաճախ հայցադիմումները և դիմումները անհիմն և ձևական պատճառաբանություններով վերադարձվում են, ինչի արդյունքում կոպտորեն խախտվում են անձանց՝ դատարանի մատչելիության և ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական և կոնվենցիոն իրավունքները: Մասնավորապես, գործնականում հանդիպում են դեպքեր, երբ դատարանը հայցադիմումը վերադարձնում, կամ ընդունումը մերժում է այնպիսի ենթադրյալ վրիպակներ ուղղելու նշումով, որոնք որևէ դեպքում չեն կարող որակվել որպես խոչընդոտ հայցադիմումը վարույթ ընդունելու համար և ենթակա են պարզման օրինակ գործի դատաքննության նախապատրաստման փուլում:

Մյուս խնդիրը վերաբերում է քաղաքացիական և վարչական գործերով ողջամիտ ժամկետները պահպանելուն:

Խնդիրներ կան դատական տուգանքի, ինչպես նաև դատալեքս համակարգում որոշ դատական ակտեր չտեղադրելու մասերով:

Լուծման առաջարկ՝

Խնդիրը կարող է լուծվել օրենսդրական նախաձեռնության և իրավակիրառական պրակտիկայի ձևավորման կարգով՝

Օրենսդրական մասով՝

5.1. առաջարկվում է դատավարական օրենսգրքերով սահմանել առաջին ատյանի դատարանների կողմից գործերի քննության ողջամիտ կոնկրետ ժամկետներ՝ որպես բացառություն ամրագրելով այն դեպքերը, երբ դատարանը քննում է առանձնակի բարդ և ծավալուն գործեր, կամ առկա են արդարադատության շահերից բխող այլ օբյեկտիվ պատճառներ: Այս դեպքում, կարելի է հնարավորություն տալ դատավորին՝ իր պատճառաբանված որոշմամբ երկարաձգել գործի քննության ժամկետը:

5.2. առաջարկվում է վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու միջոցով՝ մինչև որոշակի գումարի չափին համարժեք վարչական ակտերով վիճարկման գործերով ՀՀ վարչական դատարանի վճիռների դեմ բողոք բերելու իրավունք վերապահել միայն հայցվոր կամ պատասխանող քաղաքացիներին և իրավաբանական անձանց: Միայն հնարավորություն տալ ՀՀ գլխավոր դատախազին կամ տեղակալներին բողոքարկել պետական մարմինների անունից, եթե կարձանագրեն, որ այդ գործերով սխալ նախադեպեր են առաջանում:

5.3. առաջարկվում է դատավարական օրենսգրքերում փոփոխություններ

կատարելու միջոցով դատական սանկցիայի՝ տուգանքը փաստաբանների և դատախազների նկատմամբ կիրառելու հնարավորությունը վերացնել.

5.4. առաջարկվում է դատավարական օրենսգրքերում փոփոխություններ կատարելու միջոցով սահմանել, որ Datalex.am կայքում պետք է տեղադրվեն արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթներին առնչվող տվյալները, ինչպես նաև նախաքննության փուլի ժամանակ դատական վերահսկողության արդյունքում կայացվող դատական ակտերը.

Իրավակիրառական մասով՝

5.5. առաջարկվում է լուծել փաստաբանական ծախսի (դատական ծախս) հատուցման հարցը: Դատարանները բավարար չափով չեն բավարարում փաստաբանի վճարը փոխհատուցելու պահանջները, ինչը չի լուծում դատական ծախսի կանխարգելիչ նպատակը.

5.6. առաջարկվում է լուծել Բարձրագույն դատական խորհրդի գործի քննության միջին ուղենիշային տևողությունը սահմանելու հարցը, որը զսպաշապիկ կլինի ողջամիտ ժամկետները պահպանելու հարցում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Ջոհրաբյան